

լուրերը կարծես առանձին յամառութիւն ստացան և բամբասառէր ու զրպարտող մամուլը ձայնակցեց խաւար ոյժերին:

Ահա թէ ինչո՞ւ Կովկասը ջղայնութեամբ սպասում էր կոմսի այս անգամուայ դարձին, ահա թէ ինչո՞ւ այնքան գրկաբաց ընդունեց նա իր սիրելի իշխանաւորին:

Կովկասի Փոխարքայի անձի հետ կապուած է մեր երկրի անհրաժեշտ բարենորոգումների իրականացման խնդիրը:

Փոխարքայի վերադարձը Կովկասի համար գաղափարի յաղթանակի նշանակութիւն ունի:

ՄԱՆՐ ԼՈՒՐԵՐ

Փրկութեան բանակը. — Փրկութեան բանակը հիմնել է Սամուէլ Բուտը (ծն. 1829 թ.) 1865 թ. որի ճիւղաւորութիւնները տարածուած են բոլոր քաղաքակիրթ երկրներում: Բարու և ճշմարտութեան գաղափարների եռանդուն քարոզութիւնների շնորհիւ նրան յաջողուած է ստորագրութիւն բանալով ահագին գումար ժողովել, որպէս զի հիմնուեն արհեստանոցներ, ապաստաններ, գաղութներ, պահեստներ և այլ այնպիսի հիմնարկութիւններ, որ փրկութեան բանակի անդամները կարողանային ապաստան, աշխատանք և սնունդ ստանալ: Փրկութեան բանակի առաջնորդներն ու քարոզիչները գլխաւորապէս յարձակուում են արկածախառն դէմ: Եւ շնորհիւ եռանդուն ճառերի, որոնցով նրանք ցոյց են տալիս արեւեցողութեան սարսափելի վնասները, փրկութեան բանակը խտացել է շարքերը լրջութեան ձգտումներով առգորուած բազմութիւ անձերով: Ամեն օր, երեկոյեան ժամի 7-ին փրկութեան բանակին պատկանող բոլոր համայնքների ապաստաններում տեղի է ունենում երեկոյեան պաշտամունքը, որին ներկայ գտնուելը անդամների համար կամաւոր է: Սակայն միշտ մասնակցողները բազմութիւ են լինում, և այդ անբաղդ, անտուն, կեանքի կռոււմ ընկած մարդկանց մէջ, որոնք օգնութիւն են որոնում փրկութեան բանակում, տիրապետում է կատարեալ կարգ,

հանգստութիւն և վայելչութիւն: Փրկութեան բանակի գործունէութիւնը շատ անկեալների պատուաւոր լուրջ կէտների ճանապարհի վրայ է բերել և հեաղհեաէ շատ կողմնակիցներ է գրաւում զէպ' ինքքը: Այդ բանակը կողմակերպող «զեններալ» Բուտոն աշխատում է, որ թայլատուի Ռուսաստանում էլ տարածել նրա ճիւղաւորութիւնները:

Հաբեցների կամ Եթովպացիների կրօնական ծեսերը.—Այս «ոռն քրիստոնէաների» կրօնը հին դարերի տիեզերական ժողովներից յետոյ մինչև այժմ չի փոխուած և մեծ նմանութիւն ունի ներկայ քրիստոնէական կրօնի հետ: Միայն որոնց անօթները կոպիտ են, դորժ են ածում պղնձէ մասնատուի, մեծ ու պոքր խաչեր. ունին նաև երկու բո. րվառ բոժոժներով, քշոցներ, և մագաղաթի վրայ գրուած աւետարան, և նկարներ, որ Եթովպիայի հովանաւորն է համարում: Համարեա բոլոր տօները մերիկի համեմատ են, պատերը նմանապէս. չորեքշաբթի և ուրբաթ օրերը մինչև ճաշ ջուր չեն խմում, այդ օրերն միս չեն դորժ ածում, կարգում են աւետարան և երգում Գաւթի սաղմոսները: Սրանց մեծ պատը ութ շաբաթ է, սկսում է մեր քարիկէնդանին և շատ խոտութեամբ պահուած է. ամբողջ պատի ընթացքում իւղեղէն և մոեղէն չեն դորժ ածում և կերակրւում են բարակ նկանակներով ու կարմիր պղպեղի արգանակով: Աւագ ուրբաթ ամենեւին բան չեն ուտում, իսկ շաբաթ նոյն իսկ ջուր չեն խմում: Մեծ տօներին մայրաքաղաքում կայսրը եկեղեցու առջևի մեծ հրապարակին է դուրս գալիս շրջապատուած թիկնապահներով և հոգևորականներով, որոնք շքեղ, ոսկով ու արծաթով զարդարուած լայն ու երկար հագուստներ են հագած լինում: Հանդիսատեսները հրապարակի շուրջը մեծ շրջան են կազմում: Միտապետի հրամանով շրջանի մէջտեղն են գալիս յիսուն հոգի քահանաներ, սարկաւազներ և սպասաւորներ, որոնց ձախ ձեռին դաւաղան է լինում, իսկ աջին՝ մագաղաթէ գիրքը. դրանցից տասի առաջ լինում են մեծ տակառածն թմբուկներ: Սկսում է ծիսակատարութիւնը: Այդ քահանաների մեղեդին սկզբում ծանր է լինում և երգւում է բոժոժների և թմբուկի հարուածների ուղեկցութեամբ. տպա արագանում է և դրա ու թմբուկների տակաով սկսում է եկեղեցական պարը, որ զեաղհեաէ արագանում է. քշոցները հնչում են աւելի արագ, թմբուկների ձայնն աւելի զօրեղանում է և պարոզների շարժումներն աւանդելի արագութիւն են ստանում, բոլորի դէմքերը գրգռւում են: Վերջապէս երգեցողութեան ժամանակ մի ինչ որ ուրա-

խալի քան է լաւում, երգը մի անգամից ընդհատուում է, երա-
ժշտութիւնը նոյնպէս և բոլոր քահանաները կայսրին գլուխ
տալով վերջացնում են արարողութիւնը: Ծէսի մէջ պարի ներ-
ներմուծումը պատճառաբանում են նրանով, որ Դաւիթը «ուխ-
տի ապականակի առաջ ցատկել և պարել է», որին ապացոյց են
համարում Հաբէշտանում պահուած շափազանց հին և հա-
զուադիւտ նուագարանը՝ «Դաւիթի քնարը»:

Ա բողջ աշխարհի մեհանիկ մարդը.—Մարդկային քննող
միտքը անդադար ձգտում է թափանցել անցեալ դարերի խորքը
և լուծել մարդկային գոյութեան գաղանիքը: Մարդաբանու-
թիւնը ձգտում է խորին հնութիւնից պատահաբար ողջ մնա-
ցած առարկաներից վերականգնել մեր հեռաւոր նախորդների
կեանքի պատկերը: Առանձին խնամքով ուսումնասիրւում են
պեղումով հանած մարդկանց ոսկերոտիքը, որոնք մեռել են
հազարաւոր տարիներ առաջ. դրանցով վերաստեղծում են
նախկին մարդկանց կազմաւածքը: Մարդկային ոսկրներ շատ են
գտնւում, բայց մինչև վերջերս ամբողջ կմաղք չի գտնուել.
միայն մօտ ժամանակում Լոնդոնի մարդաբանական թանգա-
րանը հարստացաւ մի վերին աստիճանի թանգազին գիւտով.
այնտեղ է տարուած հին աշխարհի ընակիչներից մէկի հիանալի
ընթացով պահպանուած ոսկերոտիքը: Դրա գերեզմանը Եգիպ-
տոսում պատահաբար գտել է մի թափառական արաբ: Գրա-
նուածի մարմինը եգիպտական մումիայի նման չէ. հաւանակա-
նաբար նրան հաղցրել են կարած հագուստ. նա պատկանում
է եգիպտոսի քարեայ դարի վերջին շրջանին. շատ լաւ մնա-
ցել են նրա շագանակադոյն մազերը: Այդ կմաղքը բոլորի ու-
շադրութիւնը գրաւում է, և անդիւիտցիք նրան անուանում են
«աշխարհի ամենահին մարդը»:

Գիբր կենսակիրք ազգերի մեջ.—Աշխարհի նշանաւոր պե-
տութիւններից տասնամէկի մէջ միատին առած տարեկան 80000
նոր դրքեր են լոյս ընծայւում. այդ պետութիւններն են. Գեր-
մանիան, Աւստրո-Ունգարիան, Ֆրանսիան, Անգլիան, Իտալիան,
Ջուիցերիան, Բելգիան, Հոլանդեան, Դանիան, Նորուեգեան և
Միացեալ Նահանգները: Միջին թուով 3920 մարդու վրայ ընկ-
նում է մի գիրք: Գրքերի արտադրութեան մէջ առաջնութեան
գափնին պատկանում է Ջուիցերիային, ուր 448 մարդու վրայ
ընկնում է մի գիրք: Այնուհետև հերթով գալիս են միւս պե-
տութիւնները, որոնց մէջ մի-մի գիրք ընկնում է Հոլանդիա-
յում՝ 1600 մարդու վրայ. Դանիայում՝ 1618 մարդու վրայ.
Գերմանիայում՝ 2085 մարդու վրայ, Բելգիայում՝ 2700 հոգու

վրայ, Նորուիգիայում՝ 3146-ի վրայ, Ֆրանսիայում՝ 3180-ի վրայ, Անգլիայում՝ 4642-ի վրայ, Իտալիայում՝ 5320-ի վրայ:

Օլիմպիական խաղերի վերակենդանացումը.—Ներկայումս բոլոր երկրներում առանձին ուշադրութիւն են դարձնում Ֆիզիքական կրթութեան վրայ, որ տալիս է առողջ հոգի առողջ մարմնի մէջ: Այդ պատճառով մտածել են վերանորոգել ոլիմպիական խաղերը: Այդ հարցի խորհրդածութեան համար 1894 թ. Պարիզում կազմուեց կոնգրես, որին մասնակցում էին Անգլիայի, Ամերիկայի, Ապրանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Շուեյցարի, Բելգիայի և Ռուսաստանի ներկայացուցիչները: 3000 հոգուց բաղկացած այդ կոնգրեսում վճռուեց առաջին օլիմպիական խաղերը հիմնել 1896 թ. և այնուհետև այդ շարունակել պարբերաբար, ինչպէս հին Յունաստանումն էր, չորս տարին մի անգամ. այդտեղ ընտրուեց նաև խաղերը կազմակերպելու համար մի միջազգային յանձնաժողով: Խաղերի ծրագրի մէջ մտնում են հին խաղերից կռիւը, միակը, թռիչքը, դիակը, ըմբշամարտը և տիգաձգութիւնը, իսկ նորերից՝ վելոսպեաը, տենիսը (գնդակախաղ), ֆուտբոլը և այլն:

1896 թ. առաջին օլիմպիական խաղերը կազմակերպուեցին Աթէնքում, ուր զրա համար շինուած է մի լայնատարած հրապարակ, որի մէջ տեղաւորուած են 60000 հոգի: Խաղերի յաջողութիւնը կատարեալ էր մասնակցողներն էին մեծ մասամբ ամերիկացիք: Սրանք մեծ ճարպկութիւն ցոյց աուին նաև Պարիզում երկրորդ օլիմպիադայի ժամանակ՝ 1900 թ: Երրորդ օլիմպիադան կազմակերպուեց 1904 թ. Ամերիկայի Սան-Լուի քաղաքում, իսկ չորրորդը տեղի է ունենալու ներկայ թուականին Լոնդոնում, ուր հիմնուած է լայնարձակ հրապարակ ամեն տեսակի յարմարութիւններով. սրա վրայ ծախսուած է 5 միլիոն ուրլի, և կարող է տեղաւորել 60000 հոգի:

Բացի այս միջազգային օլիմպիական խաղերը Յունաստանում ևս օրէնսդրական ճանապարհով հիմնուած են ազգային օլիմպիական խաղեր, որոնք առաջին անգամ տեղի ունեցան 1906 թ. և պարբերաբար պիտի կրկնուին չորս տարին մի անգամ:

— Սուխումում բացուած է Կ. Ն. Բ. Ը. ձիւղը:—

— Աշտարակ գիւղում բացուած է Բաքուի Հայ. Կուլտ. Միութեան ձիւղը:—

— Անցեալ ամսի վերջերին Բիֆլիսով անցել է աշխարհի չորրջը սաքով պատող Ֆրանսիացի Ռէնէ Սաէնը, որ ոոյն թուի

ապրիլ ամսի 1-ին Փարիզից ելնելով ոտքով անցել է՝ Գերմանեան, Աւստրո-Ունգարեան, Սերբեան, Բուլղարեան և Ռումինեան, որ-տեղից Բենարաբեայի վրայով նաև Ռուսաստան, անցնելով Ղրիմից ուղղակի Կովկաս: Թիֆլիսից նորա ուղևորութեան հարգն է՝ Բաքու, Ռաշա, Թեհրան, Բէլուջիստան, Շնդհաստան, Տօնքին, Չինաստան, Կորէեա և Եապոնեա, որտեղից նա շագենաւով հանցնի Սանֆրանչիսկօ և Միացեալ Նահանգներով—Բոստոն, ուր կրկին նաև կնստի և հանցնի Լիվէրպոլ և այդտեղից Լօն-դոնի վրայով — Դուվր: Դուվրից նա հանցնի Բալէ և ապա Պա-րիզ: Նա իւր հապած պայմանի համաձայն Պարիզ պէտքէ հաս-նի 1912 թ. Ապրիլի 1 ին. այս ճանապարհորդութիւնը նա կատարելու է ստով առանց դրամի. ապրուստ նա ձեռք պէտք է բերէ իւր նկարներն վաճառումով: Երբ որ այս բոլոր պայմանները ճշտիւ կատարէ, Յոտէնը Ֆրանսիական մամուլի Միութիւնից ստանալու է 100,000 ֆրանք:—

— Անցեալ հոկտեմբերի 22-ին Թիֆլիսում վախճանուած դրամատէր Գր. Բայանդուրեանը դեռ ևս իւր կենդանութեան ժամանակ կազմել է իւր կտակը, որով նա մի շարք բարեգոր-ծական նպատակներն է թողնում իւր մեծաքանակ հարստու-թիւնը: Լրագրական լուրերի համեմատ հանգուցեալի կտակը պահուած է Ս. Էջմիածնում:—

— Պետական շրջաններում ոկզբունքով վճռուած է արդէն կովկասեան լեռնաշղթայի վրայով երկաթուղու գիծ անցկացնե-լու խնդիրը: Գծի արժողութիւնը ենթադրուած է մօտ 60 միլ:

— Հանդ. Շիօյեանը կապել է 50,000 ռ. միանուադ և 12,000 ռ. տարեկան, որպիսի գումարներով Թիֆլիսում պիտի բացուի արհեստաւորաց դպրոց բացառապէս հայ մանկանց հա-մար: Սակայն քաղաքային վարչութիւնը ցանկութիւն է յայտնել, որ բացուելիք դպրոցում ընդունուին և օտարազգի մանկունք:—

— Դանձակում հայ համայնքը որոշել է եկեղեցական հողի վրայ կառուցանել 3 յարկանի մի շէնութիւն, որի վերին յար-կում գեանդուի Հայոց Թատրոնը: Ամբողջ շէնքի նախահաշիւը 63,000 ռ. է:

— Թիֆլիսում կազմուած է մի նոր ընկերութիւն «Ման-կական աշխարհ» անունով որի նպատակն է դարդացնել մանուկ-ների ֆիզիքական ու բարոյական կարողութիւններն ու դարկ տալ նոցա գեղասիրական ճաշակին:

— Կ. Պօլսում կազմուել է «Պօլսահայ խմբագրերնի Միու-

թիւն», որ պէտքէ պաշտպանէ «խմբագիրներուն բարոյական և նիւթական շահեր»։ Միութեան դիւանի անդամ են ընտրուել՝ պ. պ. Ռ. Զարգարեան, Մել. Կիւրճեան, Ե. Տ. Անդրէասեան, Արփիարեան, Ե. Արմաքէշխանլեան, Տ. Զաւէն և Յ. Տէր Յակովբեան։—

— Կ. Պօլսում կազմուել է նաև «Բարոյատէր Տիկնանց ընկերութիւն», որի ղեկավարն են հանդիսանում Տ. Տ. Լիւրմիւզ, Ա. Աէրվեշէն և Է. Խորասանճեան։—

— Տաճկահայ գաւառներում աւերող չքաւորութեանը դարձան տանելու համար Կ. Պօլսում կազմուել է հայ կանանց մի հանգանակիչ մասնաժողով։

— Զէյթունում և Մուշի կողմերում աւերում է սարսափելի սով։ Ժողովրդեան ծով կարիքները հոգալու համար Կ. Պօլսում բացուած է հանգանակութիւն Պատրիարքարանի և մասնաւոր անձանց ձեռքով։—

— «Արմէնիա» լրագրի հաղորդածի համաձայն Լնդկաստանցի դրամատէր հայ Սէթ Պօղոսեանը ձեռնարկել է «Լայկական ազգային կրթական ֆոնդ» հիմնելուն, դիմելով Լնդկաստանաւանակ հայ հարուստների օժանդակութեան, ինքն անձամբ նախապէս մի խոշոր գումար նուիրելով կազմուելիք այդ ֆոնդին. նա ենթադրում է ընդհանուր գումարը մօտ 200000 ուլլի, որով մտադրութիւն կայ նախ՝ Լնդկաստանում 90 տարի գոյութիւն չենցող Հայոց Մարգարիտիան ձեմարանը բարձրացնել ըստ ուսումնականի և ըստ նիւթականի և ապա մի շարք այլ բարեգործական ձեռնարկներ։

— Թիֆլիսում Տ. Նազարեանի խմբագրութեամբ լոյս է տեսնում «Կովկասեան Երեկոյ» հայերէն և ռուսերէն։

— Բաքուում Հայ. Կուլտ. Միութեան նախաձեռնութեամբ պատրաստութիւններ են տեսնում տօնելու Հայոց Թատրոնի յիսնամեակը։

ԽՕԼԵՐԱՆ ԵՐԵՒԱՆԻ ՆԱՀԱՆԳՈՒՄ

Պատճոցական տեղեկութիւններ.

Նոյեմբ. 3	Երևանում հիւանդացել են	10	հոգի, մեռել	8
» 4	»	11	»	3
» 5	Էջմիած. գաւ. »	1	»	»
» 5	Երևանում »	7	»	5

»	» Էջմիած.	»	4	»	»	3
»	» Ալեքսան.	»	»	»	»	1
»	» 6 Երևանում	»	9	»	»	7
ընդամենը	3-6 նոյ. հիւ.		42	»	»	26
համաձայնի սկզբից (հոկ. 8-ից)						
Երևանում հիւանդացել են	105,	մեռել են				66
Երևան. նահանգ.	»	19	»			14

Երևանի քաղաքային խօլերային հիւանդանոցում նոյեմբերի 1-ին մնում էր 2 հիւանդ. մինչև նոյեմբ. 7-ը ընդունուել են 11 հիւանդ. դոցանից 8-ը մեռել է, մէկը առողջացել և մնում է առ 7-ն նոյեմբերի 4 հիւանդ.

Երևանի քաղաքային հիւանդանոցում ենթարկուել են հակախօլերային պատուաստումների մինչև նոյեմբերի 6-ը 132 հոգի, որոնցից 37-ը 3 անգամ, 50-ը 2 անգամ և 45-ը մէկ անգամ:

Նոյեմբ. 7-ին Երևանում հիւանդացել է 13 հոգի
 » » » մեռել է 8 »
 » » նահանգում » 1 »
 » 8-ին հիւանդ. 11 հոգի, մեռել է 4 »
 » » Առողջացել է 4 »
 » 9-ին Երևանում հիւանդ 6, առողջ 1
 » 10-ին Էջմիածնի դաւառում հիւանդացել է 5 հոգի,
 մեռել է 4 հոգի:

Թաւրիշ, 4 նոյեմբերի

Ատրպատական ուղարկուած պարսկական կողակները, ինչպէս հաղորդում են, ամբողջապէս անցել են յեղափոխականների կողմը:
 (Կասպ.)

Թէհրան, 1 նոյեմբերի

Արտահարգ կերպով Պետերբուրգ է ուղևորւում ռուսական զեսպանը և Պօլիս՝ Թիւրքիայի զեսպանը: Լուրեր են պատում, որ զեսպանների այդ հեռանալը կապ ունի Ատրպատականում տեղի ունեցող իրերի դրութեան հետ, որպէս թէ Թուրքիան ցանկանում է դրաւել Ատրպատականը: (Ռ. Ս.)

Թէյրան, 1 նոյեմբերի

Այսօր մէջլիսի բացման օրը փողոցները լի են զօրքերով: Հրապարակների վրայ թնդանօթներ են զրուած: Շուկան փակուած է: Քաղաքում յուզմունք է տիրում: Ամենուրեք միտինգներ են տեղի ունենում: Եռանդուն ազիտացիա է մղւում

յողուտ սահմանադրութեան: Կառավարութիւնը տատանում է ձեռք առնել լճակիան միջոցներ: Զօրքերին հրամայուած է խոյս տալ ընդհարումներին: (Ռ. Ս.)

Թաւրիզ, 5 Նոյեմբերի

Այսօր Էյն-Ուղ-Դօվլէի բանակն են հասել 200 բախախարներ: Յեղափոխականների խուզարկու խմբերը անցել են Էյն-Ուղ-Դօվլէի ետևի կողմը: Վիլի-Ջիմէյդում, մուշտէիդների իջեանում, բռնուած են երկու ֆիդայիներ: Նոյնը տեղի է ունեցել նաև Բառմինջում: Էյն-Ուղ-Դօվլէն ուղարկեց առաջին շրջապաշտ խումբը՝ կողակներին: (Պ. Բ.)

Թաւրիզ, 31 հոկտեմբերի

Բողոքներ Մուժամբարի դեպքերի առթիւ: Մուժամբարից եկած նոր սուրհանդակները, ինչպէս և երեկ ճանապարհուած՝ խմբի գրած նամակները հաստատում են երեկ առաւօտեան ստացուած լուրերը. Գիւղի մի մասն թալանուած է: Երեկուայ զնացած մօտ 50 հոգինոց խմբից բացի, այսօր ևս Մուժամբար ճանապարհուեց սահմանադրականների 30 հոգինոց հեծեալ խումբը: Գնալ ցանկացողների թիւը շատ է, բայց այսբանն էլ բաւարար է համարւում: Այսօր, վաղը մեծ կռիւ է սպասւում այնտեղ:

Թեմական խորհուրդն էլ իր տեսակի օգնութիւնն Մուժամբարին հասցրած լինելու նպատակով, երկու պատգամաւոր է ուղարկել, այսօր Վասպինջ՝ Էյն-Դօվլէի մօտ, բողոքելու գիւղն աւերելու լիաօտի դէմ և միևնոյն ժամանակ առանձին դրութիւններով բողոքել է հիւպատոսներին:

Պատգամաւորները երեկոյեան բանակից յետ դառնալով, յայտնում էին, որ Էյն-Դօվլէն հաւատացրել է, որ տեղեկութիւն չունի այդ մասին և կասկած չայտնելով ձիաւորների թնդանօթ ունենալու առթիւ, խոստացել է շուտով մարդիկ ուղարկել Մուժամբար և հրոսակներին հրամայել, կողոպուտները գիւղացոց յանձնելով, յետ քաշուել գիւղին: Նոյն խոստումներով վստահացրել է և ռուսական հիւպատոսարանի առաջին թարգմանին, որ կրկնակի բողոքներով էր ներկայացած եղել նրան. մէկը թեմական խորհրդի և միւսը ռուսահպատակ գիւղատիրոջ կողմից:

Պատգամաւորներն ի միջի այլոց պատմում էին և բանակի դրութեան մասին: Ըստ նրանց՝ զօրքի թիւը հասնում է մինչև 5000 բախախարի, Շահսուլան, Ղազուինի ձիաւորների: Նոր հասել են 400 կօզակ, 4 ռուս օֆէցէրներով: Զօրքը մի քանի արդահարուած թնդանօթներ ունի: Էյն-Դօվլէի լիակումով,